




ԴԻՒԱՆ Ս. ՏԵՂԵԱՅ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Կը փակենք այստեղ մեր ներկայ տեղեկագիրը, մասնաւորելով շատ դրական ու զործնական կեցութեամբ զոր Ձերդ Բարձր Սրբադնութիւնը ունեցաւ այս առիթով, որպէս զերազոյն պատասխանատուն Երուսաղէմական մեր ազգային-հոգեւոր սրբութիւններուն։ Առանց ատոր, վէճերը կրնային երկարիլ, ծանծաղոտիլ և ամլանալ։ Ու օգտագործելով այս առիթը, չենք կրնար լուսթեամբ անցնիլ այն իրողութեան առջեւն որ Ձերդ Սրբադնութեան պատրիարքութեան շրջանը եղաւ շատ բախտորոշ ու շինարար շրջան մը Երուսաղէմի համաքրիստոնէական սրբատեղիներուն մէջ Հայց. Եկեղեցւոյ ունեցած պանծալի իրաւանց ապահովութեան, և տեւականացման տեսակէտէն։

Տակաւին քանի մը օրեր առաջ միայն աւարտեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Աստուածածնայ Գերեզմանին նորոգութիւնը։ Գրեթէ անսպասելի նուաճում մըն է ասիկա մեզի համար, որովհետեւ անիկա Սուրբ Տեղեաց կեանքին և իրաւական վէճերուն ամենէն կնճառներէն մին էր, երկարաձգուած վերջին երեսուն տարիներուն երկայնքին։ Կատարուեցաւ այդ վերանորոգութիւնը իրաւական այդ շատ փափուկ կէտին վրայ առանց դոյզն ինչ կորսնցնելու մեր դարաւոր իրաւունքներէն։ Այս մասին պիտի անդրադառնանք շուտով աւելի մանրամասն տեղեկագիրով մը, որուն մէջ տրուած պիտի դնենք այդ սրբավայրին յատուկ իրաւական, հնագիտական, պատմական բոլոր տուեալները, մեր կարելիութեան չափով։

Ձերդ Սրբադնութեան պատրիարքութեան վերջին տասներկու տարիներուն տեղի ունեցաւ և տակաւին կը շարունակէ տեղի ունենալ Ս. Յարութեան Տաճարի մեծ վերանորոգութիւնը։ Գործ մը որ Հայ Երուսաղէմէն կը խլէ այնքան ճիւղ, եռանդ ու զոհողութիւն, մանաւանդ տնտեսական դեռնի վրայ։ Մեզի իրաւակից Օրթոտոքս և Կաթոլիկ Եկեղեցիները չունեցան որեւէ մասհոգութիւն, վասնզի անոնք ունէին զիրենք ողնայարող կառավարութիւններու աւուր յենարանները թէ՛ բարոյական և թէ՛ տնտեսական տեսակէտներէ։

Իսկ մե՞նք։ Մեր Ժողովուրդի ժամանակաւոր օժանդակութենէն յետոյ

ունէինք միայն ու միայն մեր Ս. Աթոռին վտիտ հնարաւորութիւնները: Երբեմբ յուսահատութեան հասնող այս պայմաններուն տակ, Ս. Յարութեան վերանորոգութեան գործը երբեք իր առջև փակ չգտաւ: Ձերդ Բարձր Սրբապետութեան սրտին դռները, ու Դուք Ձեր կարելի ու անկարելի բոլոր միջոցներով պայծառափայլեցիք այդ Սուրբ Տաճարը հարուստ եկեղեցական կազմակերպութիւններուն վայել փառքով ու վայելչութեամբ, ապահովեցիք մեր դարաւոր նուիրական իրաւունքները միջազգային այդ սրբատեղիներէն ներս, ու հաւատիկ հանդերձեալ էք դանոնք պատուով հրտակելու որպէս ամենէն թանկագին ժառանգութիւն ապագայ մեր ժառանգորդներուն:

«Իմ պատրիարքութիւնը հաստատուած է Ս. Յարութեան բուրվառին դրայ», ըսած էք հանդիսաւոր առիթով մը Երուսաղէմի Աթոռին ամենէն պատկառելի զահակներէն մին, նշելով այսպէս մեր աստուածակոխ սրբատեղիները իրբեւ Հայ Երուսաղէմի գոյութեան իրաւունքին հզօրագոյն վաւերաթուղթը: Սրբատեղիներու վերանորոգութեան Ձեր ճիշդ ու եռանդը ուրիշ բան չէ եթէ ոչ գործնականացումը մեծ պատրիարքի այդ մեծ մտածումին, այսինքն ամբողջումն ու տեսականացումը Հայ Երուսաղէմի պանծալի փառքին գոյութեան իրաւունքին:

Պատմութիւնը թերեւ ժլատօրէն դիտէ մեր օրերը՝ անոնց ընկերային, տնտեսական, քաղաքական և այլ պայմաններու սրիսմակին ընդմէջէն: Սակայն պատմութիւնը անփարան որ զնահատանքով պիտի դիտէ Ձեր պատրիարքութեան այս օրերը, երբ զայն դիտէ Ս. Տեղերու վերաշինութեան փառաւոր սրիսմակին ընդմէջէն:

Հայցելով աստուածային օրհնութիւնը մեր պանծալի Աթոռին, անոր արժանրանիք Գահակալին, Միաբանութեան և համայն Հայ ժողովուրդին,

Մատչիմք ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

ԿԻՒՐԵՂ Ծ. ՎՐԴ. ԳԱՐԻԿԵԱՆ

Վերահսկիչ Սրբատեղեաց